



ԿԻՆՈՂՈՒԹՅՈՒՆ

Ըաղաքային «Կոմայրի» օրաթերթի հավելված

1991 թ. հունվար: № 10: Գինը՝ 50 կոպ.

ԿԱՐՄԻՔՆԵՐ «ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ» ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ ՄԱՍԻՆ

«Կոմայրի» օրաթերթի խմբագրությունը շատ արժեքավոր նախաձեռնություն է հանդես բերել: Փաստորեն «Հիշողությունը» ոչ միայն մոռացությունից փրկում է աշավոր երկրաշարժի անմեղ զոհ դարձած հազարավոր համաքաղաքացիների հիշատակը, այլև պատմություն է հանձնում մազերազրերն ու ականատեսների վիայությունները կործանված քաղաքի մասին:

սել աներևակայելի երկրաշարժը, ճշգրիտ պատկերացում կհազմեն կատարվածի մասին: Իսկ մենք, որ մինչև օրս սղում ենք մեր հարազատների կորուստները և ապրում քանդված քաղաքի հոգսերով, մի փարվում ենք յուսանկարներն ու կենսագրությունները, վավերագրերն ու վիայությունները սպազորված տեսնելով և մեր հեանորդներին ի պահ հանձնելով:

Գ. ՄԵԼԻՔՅԱՆ

Իրավարան

Տ. ԽԱԶՍՏՐՅԱՆ
«ՀԱՅԱՍՏԱՆ» օրաթերթի
հատուկ թղթակից.

«Հիշողություն» շարաթերթի նպատակը հայտնի է: Այն սուրբ մասունք կզատենա մեր սերունդների համար՝ նրանք ուղքեր չեն տեսնում:

«Հիշողություն» շարաթերթի շնորհիվ ոչ որ չի մոռացվի, ոչինչ չի մոռացվի: Նախաձեռնողները հիշարժան գործ են կատարում: Ենորհակալություն:

ՄԻ ԽՈՒՄԻ ՈՐԴԵՆՈՒՄՆԵՐ
ՄԱՅՐԵՐԻ ԱՆՈՒՆԵՑ՝
Է. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԲԱՆԻՈՒՄԻ տունը Լաեղվի...

Լուսանկարը՝ Վ. ԿՈՏՈՎԻ



Շանուգոյձման շհանն եկամ կենտոնական զրա դարանի ավերակները:

Լուսանկարը՝ ՀՄ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ

ԼԵՆԻՆԱԿԱՆ. ղեկավարների օրերի

խրոնիկա՝ գրված պատմույթ յան համար

**ԱՐԵՎԻԿ ԿՈՒՋԵՏԻՆՔ,
ԵՂԱՎ ԿԱՐԿՏԻԿ**

Հայ մարդու և հայ ժողովրդի բախտի ու ճակատագրի դարավոր փորձով ճշտված տարոնական իմաստությունն ասում է. «Արևիկ կուզեմք, ամձրևիկ եղավ, ամձրևիկ կուզեմք՝ եղավ կարկտիկ»:

Ոչ բարով գար 1988 թվականը, որ ոչ բարով եկավ: Ասացին հրեշի տարի է, դևի տարի, մտամեցինք՝ բան է, ասում են, մախալաշարումներին գերի չդառնանք, լավ կլինի, բայց, ցավոք, երիցս ցավոք, հայ ազգի համար հրեշի տարի 1988 սև-մուր թըվականը, իրոք որ, եղավ հրեշի տարի, դևի տարի՝ դիվական տարի, եռագլուխ հրեշի տարի, հրեշային տարի:

Այդ ինչու՞, այդ ինչպե՞ս է լինում, մարդ գլուխ չի հանում, որ աշխարհի մարդ-արարած չարերը և տարերքի չարերը իրենց հրեշավորությունը՝ դիվային ուժը, անընդհատ չափում են հայ սպանելով, հայ սպանելով, հայ սպանելով՝ ցեղասպանելով, Հայաստանի երկրաշարժելով, մեր տունն ու դուռը, սրտերը, պունները դարձնելով անընչափոր դաժնիքները՝ սպանում են անզբոթներն մայր ու մանուկներ, այր ու ձերեր: Սպանում են: Խեղդում են:

«Ինչու՞: Ինչի՞» համար,— հայի հարց է, հայոց, հարց է՝ ուղղված երկնքին, գետինքին և համայն բարի մարդկության արդարադատ խղճին:

«Ինչու՞: Ինչի՞» համար»:

Արդարությանը, օրենքներին և վերակառուցման-նորացման ժամանակի բարությանն ապավինելով՝ ի՞նչ ուզեցինք ոչ բարով եկած 1988 թվականից,— արևիկ ուզեցինք, արևիկ՝ մեր և մեր երեխաների շնչելու օդը թույն ու մրից և խմելու ջուրը՝ տիղմերից մաքրելու համար... Ի՞նչ մի մեծ բան ուզեցինք՝ օրինադատ մի արևիկ, որ մեր ազգային կյանքի բազում ստացափակերից գոնե մեկը մարդկային խղճի և արդարության ջերմությամբ հուզվեր՝ Լեոնային Արցախը վերամիավորվեր Հայաստանին, որի մի բուն մընացած հողի տակ, ինչպես հրեշը իր հրեշաբնում, նստած է ինքը՝ երկրաշարժ դեռ, և, ժամանակ առ ժամանակ, ահավոր ուժգնությամբ ցնցում է այս հողը՝ այս ջրատար, թշնամատար հողը՝ շան բերանից դուրս սրճած մի պատատ բար ու ձյունատ և անձրուտ հողը՝ երբեմնի հայ Հայաստանից մնացած մի ծվենը, որի օդը, ջուրը, բարը հազիվ է հերիքում մեզ՝ այստեղ ապրողներիս, որի հողի վրա ծայրը ծայրին հասցնելով ենք ապրում, և որը, միաժամանակ, մարդկային քաղաքակրթության անարդարությամբ աշխարհներում սփռված միլիոն-միլիոն-միլիոն անհայրենիք՝ հայերի սրտերի օթևանն է, ազգայության գերբը, հոգիների հայրենիքը՝ հոգևոր հայրենիքը:

Ի՞նչ ուզեցինք 1988 իբր բարեխոսում տարուց,— ուզեցինք արևիկ, ինչպես որ աստծո ամեն օրը արև-արևիկ է ուզում, որ գիշերը ցերեկանա, որ ցերեկը լինի, ցերեկը գա...

Պատմության և ճակատագրի գիշերով անցած՝ ցեղասպանություններ տեսած, ջարդ ու կոտորածներ տեսած, գաղթ ու տարագրություններ տեսած, արտերազմներ-պատերազմներ տեսած, իր մի բուն հողի վրա մի բուն մնացած իմ ժողովուրդը՝ հայ ժողովուրդը, ի՞նչ ուզեց 1988 թվականից:

Արևիկ ուզեց, որ իր ազգային, մարդկային, հասարակական, հոգևոր, մշակութային կյանքի այն կողմերը, որոնք բռնակալության կամքով շարունակ գիշերների մեջ էին՝ գիշեր էին, ցերեկանան, արև ու լույս առնեն անարդարության ծայրաքար խուփերը վերցվեն և կուսակցության որոշում-ասածով վերակառուցում-նորացում լինի ամենուր՝ տնտեսականից մինչև հոգևոր, ազգայինից մինչև միջազգային, ազգասիրությունից մինչև այլ ազգասիրություն:

Ի՞նչ ուզեցինք 1988 թվականից:

Արևիկ ուզեցինք... Եվ եղավ կարկտիկ:

Եղավ ահավոր, աղետալի, ահոնի երկրաշարժ՝ զոհվեցին մեր կոկոն երեխաները, ծաղիկ մանուկները, փրթուն երիտասարդները, հասուն այրերը, իմաստուն ձերերը... Հազար-հազարը զոհվեց, տասնյակ հազարներ զոհվեց: Օիրակ աշխարհում, Լոռի աշխարհում անգույս երկնքի ներքո բլուրվեցին հարյուրավոր գլուխերի ավերակներ, բրզվեցին Գյումրի-Լենինական շեն ու շուալ բաղաթի ավերակները, Դարաքիլիսա-Կիրովական պարզասիրտ բաղաթի ավերակները, Համալու-Սպիտակ նոր, ծաղկող բաղաթի ավերակները... Դեկտեմբերի յոթ՝ սև օր, սև-սուգ օր, գնաց ու ետ չգաս,— այդ օրը տարերքի չար կամքով հայ ժողովրդի արյունը հոսեց գետի պես, խառնվեց հողին, այնքան արյուն խմած այս արյունասեր հողին:

Հրեշային երկրաշարժի երրորդ օրը գնացի իմ ծննդավայր Գյումրի-Լենինական:

(Շարունակությունը՝ ս-րդ էջում)

ԳԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԱՐԶԱՎ ԻՐԻՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ



Ես ինչ գուցավ եր, անտաված ասված...



Լուսանկարներ Գ. ԿԱՏՐՈՒՄ



ՎԵՐՋԻՆ ՀԻՎԱՆԴԻՆ

սի ու կարեկցության չափա-
վող պաշարներից բաժին հա-
նել բոլոր-բոլորին ու մնալ
նույն բարեմայիս, սիրված մար-
դը, որի պարթև հասակն ան-
պայման առանձնանում էր
Թատերական հրապարակն հն-
դեղած մարդկանց բազմու-
թյան մեջ: Բոլորի հետ հա-
մակցանք, նա տանն էլ շա-
րունակում էր «հերթապա-
հել», մարդկանց առաջին իսկ
տագնապին ու խոտվքին ար-
ձագանքել սիրով ու պատրաս-
տակամությամբ:

Ընդամենը 44 տարի: Երևի
մեր ժողովրդին է փճակված
հազվագյուտ կարճատև ու
պայծառ կյանքերի այս առա-
տությունը:

Վրա հատավ աննախադեպ
տղետը: Իրոք, սահմանային

ԳՐԿԱԾ...

իրավիճակներում է հատակ-
վում ու պարզվում մարդկա-
յին խառնվածքը: Երևան է գա-
լիս նրա էությունը իր հակա-
միայ հատկանիշներով: Հի-
վանդանոցի 4-րդ հարկում
գտնվող բժիշկ Սուքիասյանը
չբավարարվեց բուժաշխատող-
ների ու հիվանդների շտապ
հեռացումը կարգադրելով. վե-
րևում նրան էր սպասում 18-
ամյա պատանին՝ Արմենը, ո-
րը մեկ անգամ արդեն զգա-
ցել էր նրա նշտարի փրկա-
րար գործությունը: Մակալն տա-
րիքի 3-րդ ցնցումը ճակատա-
գրական եղալ: Այդպես էլ գը-
տան նրանց՝ բժիշկ Սուքիաս-
յանին իր վերջին հիվանդին
գրկած...



ՄԱՐԳԱՐԻՏ ՍԱՐԳՍԻ ԳԻՒԼԱՆՅԱՆԸ

ՈՐՈՒՋԱՆԱՆ ՊԱՏՎԱԿԱՆԻ
ՄԱՐԿԱՐԻՏԱՆԸ ծնվել է 1947 թ.,
Կոմայրիում: Ուսանել է Ա.
Պետրոսյանի անվան միջնա-
կարգ դպրոցում, իսկ 1970-
ին ավարտել Նալբանդյանի
անվան մանկավարժական
ինստիտուտի ֆիզմաթ ֆա-
կուլտետը և աշխատանքի
անցել Մ. Մազմանյանի ան-
վան № 35 դպրոցում որպես
մաթեմատիկայի ուսուցչուհի,
մինչև ուրբազական աղետին
զոհ դառնալը:

Ռուզաննան բազմազգական
մայր էր, ուներ 4 երեխա, ո-
րոնք բոլորն էլ ուսանել են
№ 35 դպրոցում: Աղետի
տարում 2 աղջիկները սովո-
րում էին Մարքսի անվան
պոլիտեխնիկական ինստի-
տուտում: Տե՛ղ՛ Մարգարի-
տը՝ 2-րդ, Արուսյակը՝ 1-ին
կուրսում էին: Ռուզաննան
շատ էր ուրախանում և ո-
գևորվում Դավիթ որդու մար-
շալան հաջողություններով,
որը 1986 թվականից (10
տարեկան հասակից) հաճա-
խում էր մանկապատանեկան
մարզադպրոցի ծանրամար-
տի պարապմունքներին: Նրա
հետ մ'ժ հույսեր էր կապում:
Աղետից կես ժամ առաջ
Ռուզաննան դասերն ավար-
տելուց հետո տուն էր եկել:
Տանն էին նաև Մարգարիտը
և Հայկը: Երեքն էլ վայրկյան-
ների ընթացքում զոհ գնա-
ցին արհավիրքին: Հրաշքով
փրկվեցին ամուսինը, որդին՝
Դավիթը, Արուսյակ դուստրը:

ՀԱՅԿ ՍԱՐԳՍԻ ԳԻՒԼԱՆ-
ՅԱՆԸ ծնվել է 1983 թ. Կո-
մայրիում: 8 տարեկան հա-
սակում մանկապարտեզ է

հաճախել, որից հրաժեշտ է
տվել 1988 թ. աշնանը և 6
տարին դեռ չըրացած ընդուն-
վել Մազմանյանի անվան
դպրոցի 1-ին դասարանը:
Դեռ լրիվ տասնամյա չէր
դարձել փոքրիկ Հայկը, դառն
ճակատագիրը թույլ չտվեց ե-
րեխայի երազանքներն իրա-
կանանալու՝ հայրը այրուք-
մին տիրապետելու: Հայկին,
մայրիկին և քրոջը աղետի
7-րդ օրը օտարերկրացի մեր
բարեկամները հանեցին փրա-
տակների տակից և հողին
հանձնեցին:

Հայկի պայուսակը և իր
ձեռքով գրած տետրերը հա-
րազատները պահում են իրև
թանկ մասունք:

ՄԱՐԳԱՐԻՏ ՍԱՐԳՍԻ ԳԻ-
ՒԼԱՆՅԱՆԸ ծնվել է 1970 թ.,
Կոմայրիում: Մազմանյանի
անվան դպրոցին գուզընթաց,
սովորում էր նաև երաժշտա-
կան № 4 դպրոցում: 2-րդ
կուրսի ուսանողուհի էր Մարք-
սի անվան պոլիտեխնիկական
ինստիտուտի Կոմայրիի մաս-
նաճյուղի երկույան բաժնում:

Ընդամենը 19 տարեկան էր
Մարգարիտը, չհասցրեց 20-րդ
գարունին: Նա բնավորու-
թյանը համեստ, ամաչկոտ, հեզ
աղջիկ էր, կարծես նախագույն
էր կյանքին սպառնացող վը-
տանգը: Տնային բոլոր գոր-
ծերում մայրիկը օգնականն
էր, հետևում էր մյուսների դա-
սապատրաստմանը, խը-
նամքին ու դաստիարակու-
թյանը: Նա շարժանագավ
հարսնանալու և մայրանալու
բերկրանքին, չվազելեց սեփա-
կան ընտանիքի շաղցրությու-
նը:



Ծնվել է 1972 թ., սովորում
էր Ա. Պետրոսյանի անվան
№ 10 միջնակարգ դպրոցի

ԱՐՄԵՆ (ԳՐԻԳՈՐ) ԽՈՍՐՈՎԻ ՊԱՊՈՑԱՆ

9-րդ դասարանում... Այստեղ
էլ զոհվեց: 16 տարեկան էր,
առողջ ու կրոմի, ամբալագւմ
մի երեխա: Դեռևս մեկ տարե-
կան էր, էր կրթրեց հորը,
մնաց մոր միակ որդին, միակ
հույսն ու սիրտանքը, կյանքի
նպատակը: Մարգամոտ՝ էր
Արմենը, ընկերասեր ու ծնո-
րասեր: Մեծ քույրը դասա-
վանդում էր նրան, սովորեց-
նում լավն ու բարին: Ինչեք
տեսն չէր երպարում, ինչ իդ-
ժ'ը ասես չէր փաշիպալում իր
սրտի խորքում, բայց... վաղր

լանների ընթացքում փոշի
դարձավ ամեն ինչ, ցնդեցին
այդ երազներն ու նպատակ-
նքը, իսկ Արմենից որպես
սուր մատուց մնացին լոկ լու-
սանկարներ: Այդ օր' ինձ նա
խապատրաստվում էր շախմա-
տի դպրոցում կաշնակալի մըր
ց կթին՝ վարպետության թ'կ
նաճուխ համար մղվող պայքա-
րին: Մակալն պայքար մղեց
մահվան դեմ, ծանր ու նրկար
պայքար, բայց չհարողացավ
հաղթ'...

ԳԱՑԱՆԵ ԷԴՈՒԱՐԴԻ ՄԿՐՏՁՅԱՆ



Երբ դու չկաս, մայրդ՝ Ժեն-
յա Հարությունյանը, գրուցի
է բռնվել քեզ հետ, հի-
մա, մտուի ուզում է կիս-
վել, պատմել քեզ իր կրած
տառապանքի մասին: Բեզա-
նից հետո դու թողեցիր մոր
մոքուն վիշտ ու անբուժելի
վերք բացեցիր...
Ին միակ դուստրն էիր,

Գայանե՛: Աղետի ժամանակ
նր միայն լրացել էր 25 տա-
րիդ: Սովորեցիր № 14 և է-
րաժշտական № 4 դպրոցնե-
րում: Բարձր գեմատական
ներով ավարտելով հանրակրթ-
թականը, ուսումը շարունակե-
ցիր ԵրՊԻ-ի Կոմայրիի մաս-
նաճյուղի մեխանիկական բաժ-
նում: Երբեք չէիր մոռանում
1985 թվականի հունիսի 28-ը,
շարունակ մտաբերում էիր
դիպլոմիդ պաշտպանությունը:
հանձնաժողովի նախագահը սե-
ղանի վրայի ամբողջ ծաղկե-
փունջը քեզ մեկնեց, իբրև գո-
հունակության արտահայտու-
թյուն քո պատասխանի: Զո
պաշտպանությունը համար-
վեց ամենահաջողը: Իսկ հա-
ջող օրը կայացավ նշանադը-
րությունը:

Նույն զուգադիպությանը ա-
մուսնությանը հաջորդ օրը
աշխատանքի անցար «Մազ-
մոն»-ի կոնստրուկտորական
բաժնում, որպես ինժեներ-
կոնստրուկտոր: Աղետի օրը
քո սիրառու՞ դասեր՝ ՀՐՈՒ-
ՇԻ՛: ԱՂԱՍԻԻ ՆԱՀԱՊԵՏ-
ՅԱՆԻ հետ գտնվում էիր ե-
րեք ամիս առաջ վարձակա-
յած «Եռանկյունի» թաղամա-
սի 1-ին մասնաշենքում: Մեծ
երազանքով ամուսնուդ հետ
նախապատրաստվում էիր ըը
շելու Հրուշիկիդ մեկ տարին,
որը լրանալու էր դեկտեմբերի
10-ին: Իսկ հունվարին ծնվե-
լու էր երկրորդ մանկիկդ... Ա-
վաղ, աղետից միայն 15 օր
անց որոնողները գտան քեզ՝
դուտերդ փարված:

...ԱՅՍ ՓՈՒՐԻԿ ԵՐԳՈՂ ՀՈԳԻՆ



«ԵՐԿՐԱՇԱՐԺ ԵՂԱԿ, ՈՒ
ՇԱՆԵՐԻ ՓԷԱՏԱԿՆԵՐ
ՐԻ ՏԱՆԻՑ ԱՂԱՎԻՆԵՐ
ԹՈՒՆ ԳԵՊԻ ԵՐԿՐԻ ԵՎ
ՆՐԱՆՑ ՀԵՏ՝ ԱՅՍ ՓՈՒՐԻԿ
ԵՐԳՈՂ ՀՈԳԻՆ»:
Թ. ՏՈՒՆՅԱՆ
(«Աղբյուր» հանդեսի պատ.
բարտուղար)

ԼԻԼԻԹ ՎԱՐՈՍԻ ՍԱՔՈՑԱ
ՆԻՆ (ծն. 1979 թ. հուն-
վարի 22-ին) մինչև երկրա-
շարժը լավ էին ճանաչում Ա.
Պետրոսյանի անվան ֆրան-
սիական թեյումով դպրոցում:
Երրորդ դասարանցու լուսա-
նկարը գերազանցիկների կող-
քին էր:
Ուսման առաջավոր լինելուց
գառ ուներ բնական գեղեց-
կություն և օժտված էր բնա-
րականությամբ: Գրում էր
գողտրիկ բանաստեղծություն-
ներ: Լիլիթի առաջին բա-
նաստեղծությունները առա-
ջին անգամ տպագրվել են
հետմահու «Պիոներ կանչ»
(№ 7, 24 հունվարի 1990 թ.),
«Պիոներ» ամսագրում (№ 12
1988 թ. և № 12 1989 թ.):
Ֆրանսահայ կապուլտ Խաչի
հրավերով Փարիզում էին գրտ

նըվում Լիլիթի դասընկերնե-
րը՝ դպրոցի հրաշքով փրկված
40 աշակերտներ, որոնք ի-
րենց հետ տարել էին Լիլիթի
անտիպ բանաստեղծություննե-
րի ձեռագիր ժողովածուն: Փա-
րիզում հրատարակվող երկըզ
վյան «Կամք» օրաթերթը
1989 թ., սեպտեմբերի 1-2-ի,
4-5-ի և 6-ի համարներում տը-
պագրեց Լիլիթի բանաստեղ-
ծությունները:
Համարներից մեկում տպա-
գրված է «Նարարաղ» բանաս-
տեղծությունը և հակիրճ նա-
խախոսք, որն ավարտվում է
«Այո՛, Լիլիթի սիրտը Արցախ
կը տրոփէր» խոսքերով: Այս
բանաստեղծությունը տեղ է
գտել նաև Սարդարապատի
թանգարանում Արցախին նը-
վիրված սրահում:
ԱՐԱՄԱՅԻՍ ՕԻՐԱԶՈՒՆԻ



ԱՐՄԵՆ ԵՆԻՃԻՎՈՒՄԸ ԵՎ ՆԵՐՍԵՅԱՆ

ԱՐԵՎԻԿ ԿՈՒԶԵՒՆՔ, ԵՂԱՎ ԿԱՐԿՏԻԿ

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

Իմ ծնող քաղաք, ինձ մայրական կաթ տված՝ իմ ստեղծող, իմ օրորող քաղաք, այս ի՞նչ ես դարձել-համատարած գերեզմանոց, փլատակները քարե և բետոնե թարմ շիրմաքմբեր, որոնք լուսն են՝ մեռածներով, և տներում, աղաղակում և օգնություն են կանչում՝ ողջ մնացած խեղճներով...

Այս ի՞նչ ես դարձել, ինձ տառամանաչ դարձրած, հոգով, սրտով, մտքով ինձ կրթած, դաստիարակած, ինձ ուսումի տված և մոր պես դեպի կյանք ճամփու դրած Գյումրի քաղաք, մահացու խիվել-վերացել ես, չկաս, հորիզոնից հորիզոն պատկել ես դաշտ-դազաղիղ մեջ՝ փլատակներով, ճաքճաք վերքերով, մուսլ պատերով... իսկ թու վերևում աշնանալարի ձմռան երկնքի իրար կցված-կարված ամպերը քեզ վարչառակ են դարձել:

Զգայի՛ չտեսնեի այս փիճակդ, Գյումրի՛ քաղաք:

Զգայի՛ չտեսնեի փլված մանկապարտեզներդ, ալվերված դըպրոցներդ, որոնք գառնուկ մանուկների համար քարե, հողե և երկաթբետոնե դազաղներ էին դարձել... Զգայի՛ չտեսնեի իմ 16-րդ դպրոցը, որի փլատակների մեջ իրիկնային սև ու սառ քամին թերթում էր մեռած մանուկների արյունոտված տետրերը, օրագրերը, դասագրքերը... Մեռած ուսուցիչների դասամատյանները: Իսկ ծնողները՝ ողջ մնացածները ժողովվել էին դպրոցի փլատակների մեջ, ոչ, ծնողական ժողովի համար չէին եկել, եկել էին, որ ատաղիտյան թշիվները համբուրած և դպրոց ճամփած իրենց լուսն-լուսնեղ երեխաների շախչախչած դիակները փլատակներից հանեն և առանց դազաղի՛ պարկի մեջ առնելով՝ շարակեն և մեռակ-միայնակ քայլեն դեպի գերեզմանոց...

Ես տեսա իրենց լույս երեխաների մատուցները պարկի մեջ առած և գերեզմանի ճամփան թռած հայրերի... Աչքերու կուրսանային՝ չտեսնեի: Տեսա, զարհուրելիք տեսա-պարկերից մեկի միջից դուրս էր ցցվել մանկան սպիտակ մի թաթիկ և այդ թաթիկից իրիկնային մուսլ կիսամուտի մեջ լույս էր ցուցում:

Զգայի Գյումրի քաղաք՝ չտեսնեի ինչ որ տեսա: Տեսա իմ 16-րդ դպրոցի քակում մի մարդու, իր ութ տարեկան տղայի համար փլատակներից հանած անտաշ տախտակներից դազաղ էր սարքում: Աչքերու շաղկեցին և մի պահ ինձ թվաց, որ նա ոչ թե ուղիղ, այլ նավակ է սարքում իր փոքրիկ տղայի համար: Նավակ, նավակ, նավակ է սարքում...

Երանի այդպես լինեք, քայց չէ, փլատակված 16-րդ դպրոցի փլատակների մեջ փլված ու սզավոր մի տղամարդ անտաշ փայտերով և ծանգոտ ու ծուռ մեխերով դազաղ էր սարքում՝ ութ տարեկանի դազաղ... Դե, արի դիմացիր, թե մարդ ես՝ դիմացիր...

Քայց ինչ պիտի անենք, որ չդիմանանք, ինչ հող ու մոխիր պիտի տանք մեր գլխին ու արևին, որ չդիմանանք: Պիտի դիմանանք, նորից կառուցենք ալվերակ Գյումրի-Լեհիճականը, ալվերված Ղարաքիլիսա-Կիրովականը, երկրի երեսից տակնուվրա վերցրած Համամու-Սպիտակը և գյուղերը, գյուղերը...

Պիտի դիմանանք ու հառնենք: Ալվերված տների տեղ մոր տներ շինեն հայ տղամարդիկ, իսկ հայ մայրերը պիտի ծնեն, շատ ծնեն, որ չպակասի գյումրեցու սրախոս, իմաստախոս քարքառը, որ չպակասի լոռեցու երգածայն քառը...

Պիտի դիմանանք, կառուցենք, մեռածները պիտի հառնեն մորածին գյումրեցիներով ու լոռեցիներով, քայց միամտանակ սգի և սկի այս օրերին պիտի սթափորեն խոսեն հայ շինարարների ձեռքով շինված մանկապարտեզների, դպրոցների, տների ինչպիսիսի ու ինչ որակի լինելու մասին, հայ շինարարների մարդկային բարոյակամություն, պատվի ու պատվախնդրության մասին:

Գուցե ոմանք սանձ՝ մի՞թե դրա ժամանակ է, սանձ՝ հիմա սզալու ժամանակ է, ոչ պատասխան պահանջելու, ոչ մեղադրելու: Ոչ, հենց հիմա է դրա ժամանակը, որովհետև արդեն իսկ մոր հիմքեր են փորվում՝ մոր մանկապարտեզների, մոր դպրոցների, մոր տների համար և պետք է դրանք ամուր լինեն և ցեմենտված լինեն շինարարների բարոյակամության, պատվախնդրության և խղճի «ցեմենտով»:

Երկրաշարժը՝ երկրաշարժ, քայց զոհերի թիվը շատ պակաս կլինեք, եթե չիմենի գազրելի ցեմենտագոությունը, փայտագոությունը, ամրամագոությունը, եթե զողելու ենթակա տասը կետերի փոխարեն մեկ-երկու զողվածք չիմեն: «Արագ, էժամ, որակով» տխմար կոչն անելով՝ տարիներ շարունակ շինարարները աչքակապություն են արել՝ թքած-կպցրած շենքեր են բարձրացել, իսկ թերթերի, ուղիղի ու հեռուստատեսության աշխատողները փքուն և ճոռոմ խոսքեր են շուսել՝ ժամկետից շուտ շահագործման է հանձնվել այսքան ու այսքան մանկապարտեզ, այսքան ու այսքան դպրոց, այսքան ու այսքան գործարան, այսքան ու այսքան բնակարան:

Երկրաշարժը՝ երկրաշարժ, քայց Լեհիճականում, Սպիտակում և Կիրովականում փլված և ծիլ ու ծաղիկ երեխաներ սպանած մանկապարտեզների և դպրոցների շինարարները պիտի պատաս-

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)



ՌՈՒԴԻԿ ՎԱԶԱԳԱՆԻ ԱԼԵԿՍԱՆՅԱՆ

Մեկել է 1974 թ. Ղուկասյանի շրջանի Սարգսյուզում: Սովորում էր Լենինա



ԱՐՄԱՆՈՒՇ ՀՈՎՍԵՓԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Մեկված 1955 թ. քաղ. Լեհիճականում:
Չենրիկ ՀՈՎՍԵՓԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Մեկված 1957 թ. Լենինականում:

կանի № 16 դպրոցի 8-րդ դասարանում, արվեստի դպրոցի նկարչական բաժնի երկրորդ դասարանի սան էր: Սիրում էր նկարել և իր նուրբ հոգով ու մտածողությամբ նկարում գեղեցիկ և զրափիչ պատկերներ, որոնք ցուցադրվել են Մոսկվայում և ունեցել են մեծ հաջողություն: Նրա անհատական ցուցահանդեսը բացվել է 1980 թ. հունվարին Երևանի ժուռնալիստների տանը: Աշխույժ ու կատակասեր տղա էր, բայց երկրաշարժի նախորդ օրերին ինչ-որ փոխված էր երևում. անհանգիստ սպա-

սում էր քաղաքից բացակայող հոր վերադարձին և անընդհատ կրկնում՝ «Մաշան, էս ինչո՞ւ է պապան ուշանում...»: Սպասում էր... Ուներ ընկերներ, որոնց հղբայր էր համարում իրեն և միասին որոշել էին երեք հարկանի տուն կառուցել Շիրակ գյուղում ու ապրել կողք-կողքի: Այդ օրը ուշացել էր դասից: Արագ-արագ վերցրեց պալտակը ու վաղեվազ հասավ դպրոց: Շտապում էր, որ հետ շմա իր ընկերներից, որոնց դաժան ճակատագիրը տարավ միասին:

ՄԱՅՐ ՈՒ ԱՂՋԻԿ

ՎԱՐՍԵՆԻԿ ՍԱՀԱԿԻ ՍԱՀԱՎՅԱՆ

Մեկել է 1926 թ., ախարտել Լեհիճականի բժշկական ուսումնարանը: Թեև չի աշխատել սիրած մասնագիտությամբ, սակայն օգնել է միջոց մարդկանց: Անչափ քարի էր ու խելացի: Եվ խորհուրդներով շատերին էր ճիշտ ուղու վրա կանգնեցնում: Իսկական հայ կին էր, հայ մայր և հիանալի մարդ: Աշխարհը ասես իրեն էին տվել, երբ ծնվեց առաջին ֆոնդիկը ու ասես մանկացել էր նրա հետ: Թողնիկն զրկած ծպտում էին աչքերը երազվոտ ու հպարտորեն կրկնում էր հաճախ, որ թողնիկը երածիշտ է դառնալու: Սպասում էր այդ օրվան, քայց չհասցրեց տեսնել... Զոհվեց տանը իր սիրելի դստեր՝ Մարիամի հետ:

ՄԱՐԻԱՄ ՊԱՎԼՈՒՇԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնունդ ու խորհրդավոր աչքեր ուներ, որոնցով թափանցում էր մարդկանց սրտերը, հասկանում և ըմբռնում

նրանց մտքերը, միշտ իր լավատեսությամբ և հոգատարությամբ հույս էր ներշնչում, ծպիտ պարզում: Սիրում էր մարդկանց, իր աշխատանքը, իր քաղաքը, իսկ ամենից շատ՝ Վարսենիկ մայրիկին: Որ էլ գնար՝ նրա հետ էր, իսկ երբ մեռավ էր լինում, շուտ պում էր շուտ վերադառնալ տուն, որ մայրը մեռակ չըտիրի, որ մայրը հանկարծ չանհասանալանա, իսկ երբ խոսք էր գնում ամուսնության մասին, շատագուցում էր վարդի պես ու շքեղում. «Մայրիկին մեռակ չեմ թողնի»: Կյանքում չթողեց նրան մեռակ... այդ օրն էլ մեռակ չթողեց: Ու կյանքից հեռացավ մոր հետ՝ կյանքի կարողը արտում:

Մեկել է 1956 թ. Լեհիճականում, ախարտել Լեհիճականի պոլիտեխնիկական ինստիտուտի ճշգրիտ մեխանիկայի ֆակուլտետը: Ախարտելուց հետո աշխատում էր Լեհիճականի «Ստորմասշինա» գործարանում որպես ինժեներ:

ՔՈՒՅՐ ԵՎ ԵՂԱՅՐ

Ցավ է շատերի հոգում, ովքեր ճանաչում էին Արմա նուշին: Դպրոցն ալարտելուց հետո նա ընդունվեց Լեհիճականի բժշկական տեխնիկում: Մտանալով մանկաբույժի որակավորում, իր մասնագիտությամբ աշխատանքի անցավ Լենինականի № 1 մանկական հիվանդանոցում և կարողացավ իր մեղմ, բարի վերաբերմունքով, կյանք պարզևող նուրբ ձեռքերով շատ մայրերի երջանկացնել:

Դաժան երկրաշարժը ընդհատեց Արմանուշի երիտասարդ կյանքը: Բայց նրանից մտովի շրթանվեցին որդիները, ամուսինը, հարազատներն և ընկերները: Վեց օր անց նրան հանեցին իրենց բնակելի բարձրահարկ շենքի փլատակների տակից:

Հենրիկ Կարապետյանը ճանաչողների շրջանում մեծ հարգանք էր վայելում: Նա սիրված եղբայր էր, ամուսին, հայր, ընկեր և բարեկամ: Քաղաքի առաջին կուպերատիվներից էր և շատերին էր զահացրել իրենց արտադրած կանացի նրբագեղ կոշիկներով:

Այդ օրը Հենրիկը բարձր տրամադրությամբ դուրս էր եկել տնից՝ հետևում թողնելով կնոջ ուղեկցող հայացքը...

Երկրաշարժից միայն 5 օր անց գտան Հենրիկին կոշիկի ֆաբրիկայի փլատակների տակից:

Այժմ նրա երկու փոքրիկները՝ Քամարան և Հովսեփիկը մեծանում են առանց հայրիկի, որին այնքան շատ էին սիրում և այնքան հաճախ են հիշում:



ԳՅՈՒԳԵՆ ԿԱՐԷՆԻ
ՀԱՎՈՐՑԱՆ

Ծնվել է 1955 թ. փետրվարի 15-ին, Լենինականում, բանվորի ընտանիքում: Սովորել և ավարտել է № 4 միջն. դպրոցը: Բանակից վերադառնալուց հետո աշխատել է Էլեկտրատեխնիկական գործարանում որպես բանվոր, իսկ 1985 թվականից աշխատել է մթերային խանութում որպես մատակարար: Երեք երեխաների հայր էր, լավ ամուսին: Սիրում էր արդարություն և մաքրություն: Ծառ սրամիտ էր և ուրախ բնավորության տեր, պարապում էր սպորտով և մտադրվել էր իր երեխաներին: Արանին և Դավթին տեսնել սպորտով պարապելու, իսկ աղջկան՝ Սոնային որպես ուսանողուհի: Գեղեցիկ էին նրա երազանքները, սակայն ոչ մեկը չկարողացավ իրականացնել: Գորգեն Հակոբյանի կյանքը դաժան մահը ընդհատեց 33 տարեկան հասակում:



ՀՈՐԻ ԿԱՎԻՍԻՐ
ՍԻՄՈՆՅԱՆԻ ԳԱՏՄԱՅԸ

Իմ սիրալուց ու միակ զավակը՝ ՀՈՒՆՎԱՐՆԵՍ ՍԻՄՈՆՅԱՆԸ ծնվել է 1967 թվականին: Սովորում էր Մ. Մաշտոցի անվան դպրոցում: Բազում հետաքրքրությունների մեջ առանձնանում էր հակուղե ֆուտբոլի նկատմամբ և ֆիզկուլտուրայի ուսուցիչը խորհուրդ տվեց նրան տեղափոխվել Մ. Գորկու անվան ֆուտբոլի թևքում ունեցող դպրոցը: Ավարտեց հաջողությամբ, զորակոչվեց: Ծառայեց պատվով, բարձր պատիվ հայրորդու պատիվը: Վերադարձավ որդիս բանակից, հազարաչ հուր հրացին տանա լույսերը: Ծուտով դարձավ գույա-նասկեղենի ա/մ կոտորմ արտադրամասի ենթապարպետ: «Կյանքս չեմ խնայի հարեհիքս համար», արցախյան ցույցերից վերադառնալով հայտարարում էր նա: Ավաղ նրա մատաղ կյանքի թելը կտրեց անողոր երկրաշարժը: 21 գարուն ապրեց զավակս, ժպիտը ստեց նրա կյանքով ինչ աչքերում, ցամաքեց բյուրեղակն աղբյուրս...



ՀԱՄԼԵՏ ԲԱԳԿԱՏԻ
ՄՇԵՑՑԱՆ

Ծնվել է 1967 թ.: Մոսկովյան շրջադպրոցում № 37 դպրոցի սանին ավտոգործի նրկատմամբ ունեցած սերը տարավ Ախուրյանի № 85 պրոֆտեխնուումնարան, ուր նա ստացավ հիմնական մասնագիտություն: Կարգապահ ուսանողը շուտով դարձավ նույնքան կարգապահ զինվորական և պատվով կատարելով ծառայական պարտականությունները, հաղթեցի քաղաք վերադարձավ 1988 թվականի նոյեմբերի վերջին: Երիտասարդն անգամ ժամանակ չունեցավ մտորելու իր սարգայի մասին: Մահա սիրտ աղմուկ զոհը դարձավ Համլետը:



ԳՆՈՒՆ ԵՎ ՎԱՀՐԱՄ
ՅԱՇԱՅԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆԵՐ

Գնունը ծնվել էր 1960թ.-ին, Լենինականում: Աշխատում էր քաղաքի Ն.Կ.Վ.-ում որպես վարորդ: Սպորտսմեն էր, արժանացել էր բազմաթիվ շքանշանների և գովասանագրերի: Բարի էր, հոգատար և ընկերասեր, հարգված աշխատատեղում և ընկերական շրջապատում: Վահրամը երկու տարով փոքր էր նորրից: Աշխատում էր ոսդիտեխնիկայի ուսումնարանում որպես վարպետ: Ամուսնացած էր, ուներ երկու երեխա: Հայրենա սեր էր, ամբողջ հոգով նվիրված էր արցախյան շարժանը: Գնունը և Վահրամը եղբայրներ էին: Երկրաշարժի ժամանակ նրանք տանն էին, հողվարային կոչվող քաղա-



մասի շենքերից մեկում: Երբ տանն ինչ տասնիկ ներսացել է, նորարները վազել են միջուկը, հասել սասիճաններին, բայց չեն կարողացել դուրս արձնել: Միայն հասցրել են ձեռքերը վեր բարձրացնել, փորձելով սրմնով գրիս ներին ընկնող ծանր ծածկաստիղը: Փրկածների տակից Գնունը ողջ է ելել, սպրիտ անսահման տենչով գար մացած նայել է շուրջը: Հասցրել են Մարալիկի հիվանդանոց, վնասվել էր թևը, սակայն մեծ քանակությամբ արյուն էր կորցրել: Երկրաշարժից մի քանի ժամ հետո նա մահացավ Մարալիկի հիվանդանոցում: Քանի դեռ ողջ է ծնողը, անմեղ զոհ դարձած զավակները ողջ են նրա համար: Կա՞ այլ միտքարություն...



ՍՎԵՏԼԱՆԱ ԳԵՎՈՐԳԻ
ԳՈՄՅԱՆ

Սվետլանան ծնվել էր 1975 թ. օգոստոսի 6-ին, սովորում էր Բ. Ղարիբջանյանի անվան № 9 դպրոցում, 7-րդ դասարանում: Սիրում էր դպրոցն ու իր դասընկերներին: Դպրոցից, բացի հաճախում էր նաև պիտեներների պալատի պարի խմբակ: Ինչպես էր պարում... Այդ ահավոր օրն էլ դասերից հետո պետք է գնար պարի, փորձերի, բայց փշրվեցին աղջնակի երազանքները, նա դպրոցից այլևս տուն չվերադարձավ: Ետևեց զոհվեցին այն սերնդից, որ մեր ապագան էր լինելու: Բնկան վեսմ բարձունքում պարող լարախաղացի պես, որին խոցող գնդակի ահունը ճակատագիր էր, շարհոյժից զեղեցիկ բերքի պես վայր թափվեցին, պոկվեցին մեր ժողովրդի կենաց ծառից ու դորվեցին կորստյան ծովը:



ՅՈՒՐԻԿ ԲԱԴԵՎՈՅԱՆ

Իր բազմաթիվ հասակակիցների նման ՅՈՒՐԻԿ ԲԱԴԵՎՈՅԱՆԸ ևս (ծնված 1975 թ.) գարնայվ բրնձի շար խաղի զոհը: Գուցե իրականաբար շք նորհալի աղջնակի ուսուցչուհի դառնալու երազանքը, կամ զառնար հասարակական աշխատանքի ակտիվիստ (որն հատուկ էր նրա խառնվածքին) կամ զուրս զարթառարիմ, բանի որ այդ տարիքին արդեն թատերական խմբակի ակտիվ մասնակից էր: Ինչ էլ որ դառնար, հաջողություն կունենար, քան զի օժտված էր անկոտրում կամքով, պարտաճանաչում թյամբ ու խոր պիտեխնիկներով: Նրան այդպես էին ճանաչում Մ. Օրջոնիկիձեի անվան դպրոցում, որի 7-րդ դասարանի ուսման առաջավորներից էր: Զարդեռ այդ օրը նա չհասցրեց տանից դուրս գալ ու բռնել դպրոցի նահապարհը:



ԳԱՏՄԱՅ ԵՎ ՏԱՏԸ
ԲԱՂՅԱՆ ՀՈՒՓՍԻՄԵ
ՍԵՐԳԵՅԻ

Իմ սիրելի Հոփսիմե... Ինչքան լավ բալիկ էր, տան ուրախությունն ու խիճկ էր: Սովորում էր 9-րդ դպրոցում, առաջին դասարանում էր: Հիշում եմ, երբ առաջին օրը դպրոցից տուն եկավ, անընդհատ պատմում էր ու պատմում: Ետ աշխույժ էր, խելացի, նաև՝ խղճով: Մի անգամ մորաքույրը ձուկ էր բերել, նրանցից մեկը շնչում էր: Հոփսիմեն անմիջապես չուր լցրեց փոքրիկ տաշտակի մեջ ու ձկանը զցնց այնտեղ: Դասից գալիս էր թիչ, կերակրում էր ձկանը, խաղում հետը: 4-րդ օրը ձուկը սատկեց: Ետ տրխրեց, լաց եղավ իմ բալիկը: Ըսկ գրանից հետո տեսրերի մեջ միայն ձուկ էր նկատում: Բա ես՝ ինչ անեմ...



ԱԹՈՅԱՆ ԷԿՈՒԱՐԿ
ՅՈՒՐԻԿ

Էդուարդը ծնվել էր 1981-ին, սովորում էր Ղ. Դուկասյանի անվան (№ 16) դպրոցի 1-ին «բ» դասարանում: Երազում էր բժիշկ դառնալ: Ընդամենը երեք ամիս տեղի փոփոխի ուսումնական տարին, բայց այդ բերացում նա շուտ տիրապետեց առարկաներին: Ազատ ժամանակ էդուարդը զբաղվում էր նամակահիշեր հավաքելով: Սիրում էր նավերի և ինֆեաքիտների մոդելներ պատրաստել, բայց անավար եկ բաշարժը փշրեց քե էդուարդի, քե նրա ծնողներին, հազարավորների երազանքներ...



ՍՍՀԱԿՅԱՆ ԼՈՍԻՒՆԵ
ԺՈՐԱՅԻ, ծնված 1976 թ.

Գեղեցիկ էր 13-ին Լենինականում, բանվորի ընտանիքում: Առաջին դասարանից մինչև 1988 թվականի զենակների 7-ր սովորել և զոհվել է Ա. Պետրոսյանի անվան Ֆրանսիական թեթևամիջակարգ զբաղրոցում: Վերջնական զրվեց 12-ամյա տյա աղջնակի կենսագրությանը, որ համարար պետք է ունենար իր շարունակությունը, բայց չունեցավ անկախ իր կուսիների կամքից: Ապրում էինք միևնույն շենքում: Կարծես թե բնկերուհիներ լինեինք: Երկուս էլ մնացինք փլատակների տակ, նա դպրոցում, իսկ ես՝ տպարանում... Հիմա չկա հավերժորեն 12 տարեկան մնացած կուսիներ, իմ փոքրիկ հարեվանուհին, որը զեղեցիկ հուշ թողեց մեր հիշողության մեջ: ՍՈՆՅԱ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՐԵՎԻԿ ԿՈՒԶԵԻՆՔ, ԵՂԱՎ ԿԱՐԿՏԻԿ

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

խան տան, պատասխան պիտի տան՝ նախագծողից մինչև աշխղեկ, թե ինչո՞ւ է ցեմենտը պակաս, թե ինչո՞ւ է արմատորան պակաս, թե ինչո՞ւ են զողվածքները պակաս...

Պիտի պատասխան տան Լեոնիդակների, Կիրովակների, Սպիտակի կուսակցական ղեկավարները, շինարարների և շինվարչությունների պետերը, տնայիննական կոմիտեաների ղեկավարներն ու ինժեներ-տեխնոլոգները, աշխղեկները:

Երկրաշարժային ավերակները մարդկանց վիշտ ու սուգ պատճառելուց բացի, նաև իրենց հողաբարեկեն, երկաթբետոնեղեն լեզվով մեղադրում են՝ ինչպե՞ս, ախր, ինչպե՞ս կարելի է մեր երեխաների գլուխների վրա դառնկյան սրի պես կախել ավելի դաժան մի բան՝ երկաթբետոնե խախտու պանել, որի մեջ և բետոնն է պակաս, և ցեմենտն է պակաս, և զողվածքներն են պակաս:

Թույլ տվեք ասեմ, որ սա ևս իր տեսակի աղետ է՝ մեր մարդկային բարոյականության մեջ, մեր էությունն և մեր խղճի մեջ ավերներ գործած աղետ: Նախ և առաջ մեր մարդկային բարոյականությունը պիտի հաստատուն լինի, որպեսզի հաստատուն ու դիմացկուն լինեն մեր կատուցած քաղաքներն ու գյուղերը, այսպես մենք անընդհատ գերի կմնանք երկրաշարժերին և տարերային աղետներին:

Երկրաշարժային փաստակները մաքրելուց և նոր տներ, գործարաններ, դպրոցներ, մանկապարտեզներ շինելուց առաջ անպայման մենք պետք է մեր մարդկային էության, խղճի, բարոյականության փունջի վրա դնենք մաքրմանը: Ոչ բիրտիական Հորդանան գետում, այլ հասարակական կյանքի օրինական համակարգի մեջ մենք թողնենք պիտի մկրտվենք՝ շինարար՝ ենք, գործ ենք, թե՛ առևտրի աշխատող... Պիտի բարոյական մկրտություն առնենք՝ բարոյական վերափոխվենք-նորոգվենք, մեր հոգևոր կորուստները վերագտնենք՝ նորից նոր, ինչպես հարկն է, մարդանանք: Մարդկանանք, բարոյականանք, խղճովանանք, բարոյականանք, բարձրանանք...

Մենք պետք է քաղաքացիական մկրտություն առնենք՝ օգտվելով վերակառուցման-նորացման այս ժամանակի բարեպատեհությունից և մեզ մկրտողը՝ մեր մկրտիչը պետք է լինի ոչ թե Բիրտիայի Հովհաննես Մկրտիչը, այլ ինքը՝ օրենք-օրինականությունը: Այս ամենն ասում եմ և մտածում եմ՝ սուսկ ասելով, ե՞րբ է բան դուրս եկել, որ հիմա դուրս գա, ասածը պիտի գործադրվի, հայտարարվածը՝ կատարվի, մի խոսքով՝ բանը՝ խոսքը, գործ դառնա:

Առայժմ, իմ կրօնիցով, հատկապես մեզանում, չնչին բացառությունները չհաշվել... խոսքը խոսք էլ մնում է: Չնայած դրան, շատացել են, ինչքան են շատացել, ինչպես են շատացել՝ թող որ ճշմարիտ, թող որ խիզախ, խելոք, տեղին, ի հարկի և ի կարգի խոսք ասողները, մեկն էլ նրանց շարքում ես: Բայց ո՞ր են խոսքը գործ դարձնելու կոչվածները, ո՞ր են գրգռող-տնօրինողները:

Վեակառուցում-նորացման ժամանակը տարին տարվա վրա խորանում է, բայց մեր ի՞նչն է առաջվանից փոխվել-նորացել: Մի մեղադրեք վատաստության մեջ, քիչն է փոխվել-նորացել, շատն անփոփոխ հնի հանգով է ընթանում: Մեկն է փոխվել նորացել, տան անփոփոխ հնից կառուցած է գործում: Քիչը փոխվել-նորանալով, մեկը փոխվել-նորանալով՝ բան չի փոխվի, հին տանիքի մի փտած գերանը փոխելով՝ տանիքը չի նորանա, բոլոր գերանները, ամբողջ տանիքը փոխելով է, նոր կարելի է նորացնել: Այդպես էլ՝ հասարակական կյանքում պետք է ամբողջական կարգի վերակառուցում-նորացում լինի՝ փոխելով բոլոր փտած գերանները՝ մարդակերներն էլ հետը: Կորված պատերի տեղ՝ ուղիղ և ամուր պատեր, ցանցավոր մեղ լուսամուտների տեղ՝ լայնակել ու լուսավոր պատուհաններ, ճոճավոր դռների տեղ՝ փափուկ բարոյությամբ բացուցիկվող դռներ... Ահա քեզ Զիվանու ասածի՝ նման, բարի, գեղեցիկ ու առաքինի տուն, ահա քեզ բարի, գեղեցիկ և առաքինի հասարակություն, — այս է մեր բոլորիս և վերակառուցում-նորացման պահանջը: Այս է ճանապարհը, այս ճանապարհով պիտի գնանք՝ առանց դանդաղելու, առավել ևս՝ առանց ետ նայելու: Աստված մի արասցե նա նայեք՝ Լուսին կնոջ նման՝ աղեարձան կկտրենք:

Ի՞նչ էինք ուզում 1988 թվականից:

Արևիկ էինք ուզում, սակայն կարկուտ՝ երկրաշարժային քարե և երկաթբետոնե կարկուտ տեղաց Օիրակ և Լոռի աշխարհների վրա, կարկուտ՝ քարե և երկաթբետոնե կարկուտ տեղաց հայ ժողովրդի գլխին՝ ձյուն մաղեց մեր շաց գլխին... Սակայն ինչքան էլ կարկուտ տեղա, սարը միշտ կա անասան: Իմ ժողովուրդը՝ իմ սար ժողովուրդը անասաններն էլ դարձրել է դարձրել և հազարամյակների չարաղետ կարկուտներին, հույսով և հավատով եմ, որ այս հրեշի տարվա՝ 1988-ի ղեկունքների 7-ին տեղացած երկրաշարժային կարկուտին էլ կդիմանա...

Սարի պես կդիմանա:

Եվ սարի պես կանգնած կմնա:

ՀՈՒՆՎԱՐԻ ՄԵԼԻՔԱՆԻ

«Բանվոր», 27 դեկտեմբերի, 1988 թ.



ՀԱԿՈՐՅԱՆ ՎՈՒՐԳՅԱՎԱՐԿԱՆԻ

Զարարատիկ 88-ի ապրիլյան պայծառ մի օր լրացավ նրա 33 տարին: Քրիստոսի տարիքը բոլորելիս նա հասցրել էր բոլոր կարևոր հարցեր իր յո՞ճել՝ ավարտել էր համալսարանը, աշխատում էր, ուներ երկու հրաշալի որդի ու սիրած կին, իր վատակով, ջանքերով ու սիրով նորոգել էր վերջերս Եռանկյունում ըստացած բնակարանը, դարձրել մի ճոխ ու նրբաճաշակ կացարան, որ տանտիրոջ պես մեղմ էր ու պայծառ, հյուրընկալ ու ծպտուն: Ժամանակից

վաղ ներմակած մազերը վկայում էին դժվար երիտասարդությունը, բայց այժմ արդեն կարելի էր ասել... նրա աչքերը կենսախնդրություն ու սեր էին ճառագում, նրա ուշադրությունը հոգացողությունը տարածվում էր բոլորի վրա: Մեղմ հումորով էր վերաբերվում դժվարություններին ու կարող էր ծիծաղեցնել ամենատխուր պահերին, հետո էլ, ասում էր՝ «Լալու բան է, կը խնդաս...»: Ինչքան երազանքներ, ցանկություններ ուներ՝ մեկը մյուսից պայծառ ու աստվածային, լավատես էր, ուժեղ ու բարի, ու չէր հանդուրժում անարդարությունը: Լարարալյան շարժման նրան օրերին հոր հետ պատրաստվում էր մտնել կամավորական բանակ, բայց բանակի ժամանակը դեռ չէր եկել: Աշնանը ծրագրել էր ընտանիքով արտասահման ուղևորվել ու եթե մեզ հավերժորեն ուղեկցող փաստաթղթային քաշքշուկները չլինեին, այդ չարաղետ օրերին նա իր ընտանիքով հեռու կլիներ Հայաստանից: Բայց վերահաս

վախճանը իր կնիքն էր դրել նրա խոհերի վրա, նա համարա էր մտորում կյանքի ու մահվան առեղծվածի շուրջ, իսկ աշնանամուտին իր վերջին աշնանամուտի սովորական մի օր, իր իսկ խոհերն ընդհատեց մի անակնկալ հարցով. «Չեմ հասկանում, երբ ինքնաթիռ կործանվում է, բոլոր ուղևորների անկասկած գրած է միասին մտնել...»: Եռանկյունու 12 հարկանի գեղեցիկ խորխորատներում միասին էին հարևանները, Վոլոյան տանը մեծակ էր եղել, ու ոչ ոք չգիտե, թե մուտքի այն մեղիկ միջանցքում, որ բացվեց աղետի վեցերորդ օրը, ի՞նչ են խուսել մահվան դատապարտվածները, ո՞վ է առաջինն ազատել իր հոգին այդ երկրային գեհեմից, ու ո՞վ է նոր Գողգոթայի իր տառապանքներում մնացել մեծակ, մնացել վերջինը... Բարձրահասակ, ալեհեր, մեղմ ժպիտը շուրթերին, կենսախիղճ կազմը լազուրով օղակված սև քիթերում ու Քրիստոսի խաչը մարմնարկունեակալտին, նա հիմա ծպտում է հեռուից...



ԼՈՒՍՅԱ ՎԱՐՍՊԵՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (ծնվել է 1940 թ.)

Չմեռ է, սովորական ցուրտ ու սպիտակ ձմեռ, օրերն էլ նշան են իրար, ասես կրկնվող: Մեր փոքրիկ տնակում ամեն ինչ նույնն է, թվում է միշտ այստեղ ենք ապրել: Տանը ենք բոլորս, սեղանի շուրջ բոլորած, իսկ մեր կողքին՝ մի ազատ ու անշարժ

աթոռ է, քո տեղն է, սիրելի Լուսյա, որ այն օրից դատարկ է մնացել ու... Ամեն անգամ, երբ հայացքս հատնում է այդ տեղին, մի անսովոր դողով եմ պարուրվում, որքան էլ տաք լինի սենյակը, սաստիկ ցուրտ եմ գգում, որովհետև... քո չունչն է պակաս, քո տաքացնող ծախսը, քո քաղցր ձայնը, որովհետև այնքան սովորական թվացող անցնող այս օրերի մեջ անսովոր միայն քո՝ քաջակալությունն է: Երազում էիր որդիներիդ տեսնել ուսանող: Կատարվեց այդ երազանքը, սակայն ախտա, որ մինչև վերջ չվազելիցիր այդ ուրախությունը: Մասնագիտությամբ բուժքույր էիր և առաջին հերթին՝ մարդկանց հոգիները թշվոռ: Որքան էիր անիրավ քո աշխատանքին, հիվանդ մանուկների հետ հավասար, նրանց ցավի ու ծնողների անհանգստ

տոթյանը զուգահեռ տանջվում էիր հոգեպես, յուրաքանչյուր մանկան մտեմնում էիր ինչպես քո զավակներին: Հաճախ էին բախում ձեր հուղը՝ օգնություն խնդրելու: Օրվա որ ժամին էլ լինեիր, միշտ պատրաստակամ ու անորոտուց, միանգամից ուսի կենցիկի ու հուսադրող խոսքերով գործի կանցնեիր: Ի՞նչու չէ, որ ծանոթ-բարեկամները կրկնում էին միշտ՝ «թեթև է Լուսյայի ձեռքը, հոգին՝ մաքուր, ուրեմն ամեն ինչ լավ կլինի...»: Ժամերին էր թժկում, սակայն իր իսկ կորուստով առաջացած վերքը հարազատների սրտում այսօր ոչ ոք չի կարող բուժել: Սովորական օր է, գոնե այդպես է թվում ինձ, անսովորը միայն... քո քաջակալությունն է:

Մ. ԴԱՎԹՅԱՆ



ԴԻԼԵԱՐ, ԱՇՈՏԻԿ ԹԵՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆԵՐ

Ապրում էր մեր ընտանիքը ուրախ ու երջանիկ: Եվ ինչպես ուրախ չլինեինք, երբ ասե՞լ րուպե մեր երկու փոքրիկների՝ Աշտիկի ու Թերմինայի թոթով լեզվի քառերն ու ծախսներն էին մեզ ուղեկցում, երբ սկեսրոջս՝ ԴԻԼԵԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ (ծնված, 1927 թ.) ջերմ ու հոգատար ձեռքերի տակ էին մեծանում նրանք ու ամեն անգամ կատակով դիմում էր նա մեզ. «Բոլորից լավ ես եմ պահում թոռնիկներին, ոչ մեկին



չեմ վատահում նրանց...»: Իսկ մենք՝ ես և ամուսինս, ներքուստ հպարտանում էինք այդ խոսքերով: Իրոք, հիանալի մայր էր նա ու տատիկ, նաև՝ լավ մարդ: Աշխատում էր Լեոնիդակների Լուկաշինի անվան մանկապարտեզի ֆարքի կազմում որպես խոհարար: Չէր հոգնում աշխատանքից, իրեն զգում էր առույգ ու երջանիկ թոռնիկների, տղայի ու հարսի կողքին: Երկրաշարժը խաբարեց մեր ընտանիքի երջանկությունը: Մահացավ նա, մեր երկու բախիկների իր մի բեկի թոռնիկների հետ, որոնք դեռ ոչինչ չէին հասցրել: Տը



դաս՝ Աշտիկը նոր-նոր սովորել էր այն միակ բառը՝ պապա, որը բոլորիս ծախում էր շարժում, իսկ աղջիկս իրեն տված՝ ինչ ես ուզում դառնալ հարցին, միշտ պատասխանում էր՝ հարսիկ: Երեք տարեկան էր և... հարսիկ էր ուզում դառնալ: Այնքան էր սիրում այդ պիտակ շուրթերը, հարսանեկան քողը, որ այդպես էլ մնաց ծապավենի վրա... Հիմա մխիթարվում ենք մեր նորածին աղջկանով, որի անունը դարձյալ... Թերմինա է:

ԱՊՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՎ ԲՈՒՈՐԸ ՄԻ ԸՆՏԱՆԻՔԻՑ




ՎԱՐՂՈՒՆԻ ԴԱՎԹԻ
 ԴԱՎԹՅԱՆԸ (ՌԱՖԱՅԵԼՅԱՆԸ) ծնվել է 1962 թվականի սեպտեմբերի 10-ին: Սովորել է № 34 միջնակարգ դպրոցում ապա ընդունվել և գերազանցությամբ ավարտել է № 33 պրոֆտեխնուստմասրանի կարի տեխնոլոգիայի բաժինը:
 Ամուսնացել է 1982 թվականին, ունեցել երկու երեխաներ: Վարդուհին անմնացորդ անիրավ էր ամուսնում՝ Պետրոսին և սիրատուն զախակներին: Ամուսինն իրեն համարում էր աշխարհի ամենաներջանիկ մարդը, սակայն չգիտեր, որ մոտեցող չարագույժ աղետը գրկելու է իր սիրելի մորից՝ կնոջից և երեխաներից: Աղետի օրը Վարդուհին զոհվեց 2 երեխաների հետ Գերցենի փողոցի 9 հարկանի շենքում, թողնելով ամուսնուն և հարազատներին արցունքըն աչքերին: Համիկը ծնվել էր 1985-ին, Գևորգը՝ 1986-ին:

ԳԱՅԱՆԵ ԽԱՉԻԿԻ ԱԼԵԿՍԱՆՅԱՆԸ ծնվել է 1974-ին: Սովորում էր Դարիքջանյանի անվան դպրոցի 8-րդ դասարանում: Այդ դասարանից ողջ մնացին յոթ աշակերտներ, որոնք հիմա ավարտական դասարանում են:
 Երագում էիր այն օրվան, որ ավարտական դասարանում կհագնեիր շքեղ զգեստների «Վերջին զանգ» միջոցառման ժամանակ: Ծառ էիր սիրում այդ զգեստը, որ դու հագար ընդմիջ: Ընդմիջո դադարել է մալ քո նվազի ձայնը: Դեկտեմբերի 8-ին, կարծես կանխագուշակով, դու գրել էիր. «Անցորդ, մի մայր ինձ այդպես, ես էլ էի քեզ պես, իսկ հիմա՝ աքսպես»: Մի՞թե գուշակել էիր, որ մեկ օր հետո այլևս գոյություն չես ունենա:
ԲԱԳՐԱՏԻԿ ՍՏԵՓԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ ծնվել է 1874 թվականին: Սովորում էր

Արտյոմ Պետրոսյանի անվան դպրոցում: 8-րդ դասարանում էր, հաճախում էր մեկ մարզադպրոց, մասնակցում օլիմպիադաների:
 Խելացի ու սիրված երեխա էր: Համարվում էր ուսուցիչների պարծանքը: Նոր էին բնակարան ստացել Բուլվարային փողոցում: Տան միակ տղան էր, հայրենի հարկի ծուխ ծխանին: Սիրում էր տան անկյունները կանաչորեն ինչպես հարկն է: Սակայն չվիճակվեց հագրատիկին ապրելու իր իսկ կանաչորած բլրակարանում: Պետրոսյանի անվան դպրոցը դարձավ նրա և իր նման անմեղ աշակերտների և ուսուցիչների գերեզմանը:
ՆԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆԻ ՌԱՖԱՅԵԼՅԱՆԸ ծնվել է 1979 թվականին: Սովորում էր Դարիքջանյանի անվան դպրոցի 8-րդ դասարանում:
 Աղետալի երկրաշարժի օրը

երբոր՝ 2-րդ դասարանի աշակերտ ԿԱՐԵՆ ՍՏԵՓԱՆԻ ՌԱՖԱՅԵԼՅԱՆԻ հետ մա էր դպրոց գնաց: Հին կառույցը կանգուն մնաց, մորը վայրկեմարար փլվեց և տակովն առավ տուննյակ անմեղ կյանք:
 Նարինեի խաղաթի՝ գրպանից հանված գրության մեջ ասված էր՝ «Ես շուտ կմեռնեմ»: Երկրորդ վիշտն ապրեցին հարազատներն ու մերձավորները:
 Կարենը հասուն երեխայի տպավորություն էր թողնում: Դեկտեմբերի 8-ին, երբ նրան դպրոց էին ուղևկցում, Կարենը մայելով 9 հարկանի մի կառույցի սասց.
 — Հայրիկ, եթե շենքը փլվի, ինչ կլինի:
 Իսկ հաջորդ օրը ոչ միայն այդ, այլև շատ կառույցներ, մալ կրթօջայի եռահարկ շինությունը, վերածվել էին փլատակների...



ՀԱՅԱՍՏԱՆ. աղետի, զլթասարտուլթյան, ա ր ա ր մ ա ն գ ո տ ի

Աղետի հետևանքների վերացմանը մասնակցում էր Անդրկովկասյան զինվորական օկրուգի անձնակազմը:
 Խուսանկար՝ Արմենյան

ՉՈՐՍ ԱՆՄԵՂ ՉՈՂ



ՆՑ 5 գիշերօթիկ դպրոցի ուսուցչուհի ԼԵՆԱ ԿՑՈՒՐԵՆՆԱՆՆ աղ օրն աշխատանքի էր գնալու ժամը 18-ին: Չար բախտի խաղ էր գուցե, որ տանն էին նաև աղագ երեխաները՝ «Ստրոմմաշինա» գործարանի աշխատակիցներ ԳԱՅԱՆԵՆ ու ՎԱԶԳԵՆԸ: Ահա ֆախոր մի ցնցում և ներքանք հավիտենապես լռեցին իրենց քնակարանի փվածքների տակ, առանց իմանալու ընտանիքի կրտսերի՝

Բ. Կարիբջանյանի անվան դպրոցի 10-րդ դասարանի գեղարվեստի աշակերտուհի ՄԵՏԱԲԱՆԱ ԹՈՓԶԵԱՆԻ մահը: Չորս ամիսը գոհ մեկ ընտանիքից, Հայաստանի չորս պիտանի անդամների կորուստ: Մարդիկ, որոնք դեռ չէին հասցրել իրենց խոսքն ասել, որոնք դեռ որքան ևրազներ ու իղձեր թողեց՜ն անկատար...

ՀՈՒՆՎԱՐ ԶՈՂՎԱՅՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԹԱՏՐՈՆԻ ՄՈՏ

Որտեղից էր հայտնվում կինը, հայտնի չէր: Լեռնը նրկատել էր, որ նա գալիս էր օրվա նույն ժամին, դատարկ պայուսակը ձեռքին, գորշ վերարկում, գունաթափ գլխաշորով և վաղուց մաշված կոշիկներով: Նստում էր թատրոնի դիմաց, եղևիների տակ ու երկար նայում էր ցայտող ջրերին: Նրանք ծանոթացան: Տըղայի հետ խոսելիս կընոջ անթափանց դեմքը բացվում էր, կենտրոնները հարթվում էին, աչքերը ծալում: Իսկ մի օր էլ նրանք սրտանց գրուցեցին: Կինը ուներ ամուսնացած երեխաներ, որ քաղաքից հեռու էին ապրում: Գուցե այդ պատճառով նա մի տեսակ ամայացած, ինքն իր մեջ ամփոփված էր երևում, երևի շատ դժվար է մայրերին պահել, մեծացնել և կարող մնալ նրանցից: Մի օր նա աղելի տխուր ու խեղճ երևաց: Բարեկրթ Լեվոնին, նա հարցնեց, որ հիվանդ է: Երեխան հետաքրքրվեց, թե ինչու դեղորայք չի ընդունում: Կինն ասաց, կամ դեղեր, որ ձեռք չեն ընկնում: Լեռնը թախամազին խնդրեց հաջունել այդ դեղերի անվանումները: Ոչ, ես չեմ մոռանա, հավատացրեց երեխան, միայն թե ասեք: — Կասեմ հայրիկին, կրեիր: Այդ օրը երեկոյան տղան զգուշությամբ «հարցաքննեց» հորը, թե կարո՞ղ է արդյոք ձեռք բերել չճարվող դեղեր: «Կփորձեմ, պատասխանեց հայրիկը, միայն թե ասա՝ ո՞ւմ համար են դրանք»: — Հայրիկ, որ ասեմ լավ չեմ ճանաչում, հավատա, խնդրում եմ, չգիտեմ: Նա մեծ կին է, մի տատիկ, բայց երեխաները իր մոտ չեն: Նա ապրում է մեռակ ու տխուր: Նրա պայուսակը միշտ դատարկ է: Նա միշտ մեռակ գալիս է ու նստում, ասես իր համար ցուրտ է, շարունակ

մքսում է: Գալիս է թատրոնի մոտ, եղևիների տակ, նստում է ու նայո՞ւմ, նայո՞ւմ ջրերին: Այսօր իմացա, որ հիվանդ է: նրան պետք են դեղեր: Եթե առողջանա, կարող է նույնիսկ ծիծաղել: Արտամասնական այդ դեղերը հայրիկը բերեց շաքաթ օրը, հավանան ուշ էր: Լեվոնը ուրախացավ: Քիչ անց նա անկատա ասեց աչքից, դուրս եկավ միջանցք: Մաքրը հետևեց Լեռնիկին: Նա կամացուկ հազնում էր կոշիկները: — Մայրիկ, ես գիտեմ ներքանց տունը, Մայաթ-Նուֆա փողոցի վրա է: Ես հիմա կը գամ: Խնդրում եմ: Մայրը գորովանքով նայում էր Լեռնիկին, արդեն չըլսելով նրա քայտորոշումը: Երբ մոտքի, հարկի, բնակարանի մասին: Նա մտավ ներս ու միջնեկ աղջկան հոր դռնը ուղեկցել երեխային: Լեռնիկը գրպանը դրեց դեղերը ու հանգստացնելով, որ ինքը շուտ կվերադառնա, դուրս գնաց: ...Գնաց այս կյանքից Լուկազանի անվան դպրոցի տասներորդ դասարանի Լեվոն Մկրտչյանը: Հիմա չկա նաև այն տունը, որտեղ ապրում էր տղան: Նորից այն կինը նստում է եղևիների տակ, թատրոնի մոտքի դիմաց ու նայում անորոշության մեջ: Կինը այլևս չի հանդիպում Լեռնիկին: Աշխարհում շատ բան է փոխվել: Բայց կինը չգիտե, որ զոհվել է իր մանուկ քարեկամը: Ն Կ Ա Ր Ը Ինչ-որ գործով դուրս կան չեցին կնոջը իր աշխատանքակից: Նա գնաց: Ես մը նացի մեռակ: Ներս մտավ դպրոցական համազգեստով փոքրիկ մի տղա ու լուռ նստեց: Գրասենյակին դրված էր գրաֆիկ մի աշխատանք՝ պիտեկական թեմազով: Ես մըլտածեցի, որ աշխատանքյա

կի սևօրնը չի կարողանում կորվել իր աղագ ջրկա տապարական անցյալից ու տեսնես ում համար է պատրաստել: Ժամանակ առ ժամանակ մեծ գրասենյակի այս ծայրից իմ հայացքը նորից կանգնում էր մյուս ծայրում դրված գրաֆիկ աշխատանքի վրա: Այն կատարված էր տուշով, սև ու կարմիր գույներով: Հենց այն պահից, ինչ ես նկատեցի նկարը, մի անհանգստություն սկսվեց երեխայի մոտ: Առանց նրա կողմը նայելու, ես զգում էի, որ նա շարժվում էր, ձեռքերը դնում գրպանը, հանում, նայելով նույն դիտակետի ուղղությամբ: Վերջապես նա եկավ, մոտեցավ սեղանին, վերցրեց նկարը ու դրեց իմ առջև: Ես հայացքս քարձրացրեցի և նայեցի նրան. — Օճորհակալ եմ, ի՞նչ իմացար, որ ինձ դուր եկավ: — Ես զգացի, որ դուր ուզում եք մոտիկից նայել: — Քեզ դու՞ր գալիս է այս աշխատանքը: — Չգիտեմ, — ուտերը թորվելով և չգիտես ինչու անհարմարության զգացումով ծալաց նա: — Լավ աշխատանք է, — ասացի ու հարցական նայեցի նրան: Ես եմ նկարել..., խոսեց Լեվոն Համբարձումյանը: Ես հանկարծ ճանաչեցի ՆՑ 27 մանկապարտեզի այն փոքրիկ երեխային որ Յուրի Վարդանյանի հետ հանդիպումից հետո նկարվեց նրա գրկում, երջանիկ մոր հայացքի առաջ: — Լեռնը ես, հարցրեցի, շոյելով նրա դեղճ հիշեցնող վարդագույն աչքը: Նա ծուլ տաց ու ես հիշեցի մեկ ուրիշ դեմք, որն ասես նրա եկվորյակն էր: Երկու կաթիլ ջրի պես նման էր հորը՝ Վարդանյանին: Միմուտար էր: Հոր հույսը, ոգևորությունը, կյանքի իմաստը: Լ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՄՈՂՎՈՒ ԲԱՐԵՎԱՄՆԵՐԸ՝ ԼԵՆԻՆԱԿԱՆԻՆ

Ուլան Բատորից մեր քաղաք շտապով եկած խմբի ղեկավարը՝ Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության արտաքին տնտեսական կապերի և մատակարարման մինիստրի առաջին տեղակալ Գախիի Գոտովը «Բանվորի» խմբագրության աշխատակիցների հետ ունեցած հանդիպման ժամանակ հայտնեց այն սրտակից վերաբերմունքի մասին, որ դրսևորել են իր հայրենակիցները Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի բոթը առնելուց հետո: Իսկ համրապետության կառավարությունը ժամանած առաջին խմբի հետ աղտեղյակներին անհատուց ուղարկել էր 20 տաք լուրտ, 300 հազար տուփ տավարի շոգեխաշած մսի պահածո, 10 մլն հատ թանկարժեք դեղահար և այլ ապրանքներ: Լեռնիկանում աշխատելու կմնան 4 առաջնակարգ մասնագետներ և 7 շինարար բանվորներ, որոնց խումբը մոտ ապագայում կը համալրվի նոր մարդկանցով:



Տափ հաշ՝ աղետյակներին: Լուսանկարը՝ Վ. Կոտովի

«ԿՈՒՄՍՅՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԱԿԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԿՈՄՍՅՐԻԻ ԶՈՂՎԱՅՆԻ ՏՊԱՐԱՆ, ՄԱՅՈՒՅԱՆ, Փ. 47